ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ

"ԳԱՎԱՌԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ"
ՓԲԸ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ

ГЕГАРКУНИКСКАЯ ОБЛАСТЬ

"ГАВАРИ БЖШКАКАН

КЕНТРОН" ЗАО

<< Գեղարքունիքի մարզ ք. Գավառ,Ազատության 21,հեռ. (+37264 2-33-53) ֆաքս (0264 2-33-53)
РА, Гегаркуниская область, г. Гавар, ул. Азатутяна 21, тел. (+37264 2-33-53.) gavaribk@mail.ru

07-186
14.04.2020թ.

<<Աիդա թրեյդ>>ՍՊԸ-ի
Տնօրեն՝ Է. Փոթոյանին

ԾԱՆՈՒՑՈՒՄ

Հարգելի Է. Փոթոյան.

Համաձայն 03.03.2020թ. N ԳՎԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/7-1 ծածկագրով ապրանքների մատակարարման պայմանագրի 1.1 կետի՝ Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ Պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

Պայմանագրի 2.1.7-րդ կետի համաձայն Գնորդը իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում եթե ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրացուցային օրից ավելի:

Ինչպես հայտնի է Գնորդ ընկերության կողմից բազմիցս ապրանքի մատակարարման պատվեր է արվել 92-րդ չափաբաժնի՝ քլորհեքսիդին սպիրտային լ-թ 0,5%-5լ, համար , որը սակայն մնացել է անպատասխան:

Հետևաբար, Ձեր կողմից խաղտվել է ապրանքի մատակարարման ժամկետը:

Պայմանագրի 6.2-րդ կետի համաձայն Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

Մեր կողմից Ձեզ ծանուցվել է, որ պայմանագիրը մասնակի միակողմանի լուծվում է 92-րդ չափաբաժնի համար ապրանքը չմատակարարելու պատճառով:

Գնորդ ընկերությունը հրաժարվում է շարունակել Ձեզ հետ համագործակցությունը Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն 92-րդ չափաբաժնի համար համարել լուծարված, սույն ծանուցումը ստանալու օրվանից և պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կիրառելով ՀՀ Կառավարության 2017թ մայիսի 4-ի N526-ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման մասին>> Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

<<Գավառի ԲԿ>> ՓԲԸ-ի տնօրեն՝ Ա. Կարապետյան

Scanned with CamScanner